ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 69/3

09-ը դեկտեմբերի 2023 թվականի

««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը» հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2023թ. դեկտեմբերի 09-ի նիստի թիվ 69/ 3 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը» (այսուհետև՝ Կարգ) սահմանում է «Երևանի պետական համալսարան» (այսուհետև՝ ԵՊՀ) հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) մասնագիտության կրթական ծրագրերի (այսուհետև՝ ՄԿԾ) բենչմարքինգի իրականացման նպատակներն ու խնդիրները, սկզբունքները, տեսակները, մեթոդաբանությունը և իրականացման փուլերը:

1.2. Կարգը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի, Մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման և Կրթության որակի բնագավառում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունների հիման վրա:

1.3. Սույն կարգը նպատակուղղված է ԵՊՀ ԻՄ-ում ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման գործընթացների համակարգմանը, միասնականացմանը և արդյունավետության բարձրացմանը:

1.4. ՄԿԾ-ների բենչմարքինգի գործընթացը պլանավորում և իրականցնում են համապատասխան ամբիոններն ու ֆակուլտետները, նրանց այդ աշխատանքներում աջակցում և ուղղորդում է Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը, իսկ գործընթացների կատարման ընթացքը վերահսկում են ուսումնամեթոդական վարչության (ՈՒՄՎ) պետը և կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (ԿԲԴՎ) բաժնի վարիչը:

2.ՄԿԾ-ՆԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՄԿԾ-ների բենչմարքինգը պարբերաբար իրականացվող բազմափուլ գործընթաց է և ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի որակի ապահովման մեխանիզմներից:

2.2. **ԵՊՀ ԻՄ ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման նպատակներն են.**

1) հայտնաբերել և օգտագործել այլ համալսարանների լավագույն փորձը՝ հաշվի առնելով Մասնաճյուղում դրա իրականացման հնարավորությունները և սահմանափակումները,
2) խթանել ՄԿԾ-ների շարունակական բարելավումը, արդիականացումն ու բազմազանեցումը և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ նոր ՄԿԾ-ների մշակումն ու ներդրումը՝ հաշվի առնելով առաջավոր փորձի ուսումնասիրման և համեմատական վերլուծության արդյունքները,
3) նպաստել ՄԿԾ-ների գրավչության և մրցունակության բարձրացմանն ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական տարածքներում՝ ԵՊՀ ԻՄ ու այլ առաջատար բուհերի ՄԿԾ-ների բովանդակության համադրելության և ուսումնառության վերջնարդյունքների փոխճանաչելիության ապահովման տեսանկյունից,
4) ապահովել ՄԿԾ-ներով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների լիարժեք համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (այսուհետև՝ ՈԱՇ) և ըստ առկայության՝ որակավորումների ոլորտային շրջանակի (այսուհետև՝ ՈՈՇ) բնութագրիչներին:

2.3. **ԵՊՀ ԻՄ ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման խնդիրներն են՝**

1) ուսումնասիրել բարձր վարկանիշ ունեցող և մրցունակ կրթական ծրագրեր ունեցող բուհերի համանման ՄԿԾ-ների իրականացման առաջավոր փորձը, կատարել դրանց և ԵՊՀ ԻՄ ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ու ԵՊՀ ԻՄ գործունեության առանձնահատկությունները,
2) ՄԿԾ-ների միջազգայնացման և ուսանողների շարժունության ապահովման նպատակով որոշել կրթական վերջնարդյունքների նմանություններն ու տարբերությունները,
3) կատարել կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, պարզել ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող ՄԿԾ-ների ուժեղ և թույլ կողմերը,
4) բենչմարքինգի արդյունքները դարձնել ելակետային համապատասխան կրթական ծրագրերի վերանայման և բարելավման համար,

5) զարգացնել ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման մեթոդաբանության ու ներհամալսարանական մեխանիզմների մշակման, ներդրման և պարբերական իրականացման գործընթացները:

3.ՄԿԾ-ՆԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ԵՊՀ ԻՄ-ը ՄԿԾ-ների բենչմարքինգն իրականացնելիս կարևորում է բենչմարքինգի իրականացման էթիկայի կանոնների և հետևյալ սկզբունքների պահպանումը.

1) ***համադրելիություն.*** բենչմարքինգի իրականացման գործընթացում հաշվի են առնվում նույն կամ հարակից ոլորտներում համանման ՄԿԾ-ները կամ դրանց առանձին բաղադրիչները (օրինակ՝ ուսումնառության վերջնարդյունքները, գնահատման ձևերը, մոդուլները, դասընթացները, ժամաքանակները) և դրանց մշակման, վերանայման, իրականացման ու բարելավման առաջավոր փորձի օրինակները,

2) ***համապատասխանություն.*** բենչմարքինգի իրականացման նպատակով բուհերի և բենչմարքների (հենանիշների) ընտրության համար հաշվի են առնվում ՄԿԾ-ների նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների ու ՀՀ ՈԱՇ բնութագրիչների միջև համապատասխանության անհրաժեշտությունը, ԵՊՀ ԻՄ կանոնադրական նպատակներն ու գործառույթները, առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները,

3) ***օբյեկտիվություն և թափանցիկություն.*** բենչմարքինգի իրականացման նպատակով ընտրված բուհերի ՄԿԾ-ների և դրանց գործունեությանն առնչվող տվյալները ու տեղեկությունը կիրառվում են թափանցիկ և օբյեկտիվ կերպով՝ բացառելով տվյալների ու տեղեկության գաղտնիության, կեղծման և դրանց նկատմամբ հեղինակային իրավունքների խախտման ցանկացած դրսևորում,

4) ***հավաստիություն.*** բենչմարքինգի իրականացման նպատակով օգտագործվող տվյալներն ու տեղեկությունը հավաստի են, դրանց արժանահավատությունը հիմնավորվում է համապատասխան փաստերի, փաստաթղթերի ներկայացմամբ և հավաստի աղբյուրներին (ներառյալ ուսումնական հաստատության պաշտոնական կայքին) տրվող հղումներով,

5) ***չափելիություն.*** բենչմարքինգի իրականացման համար ընտրված ցուցանիշները, չափանիշներն ու բենչմարքները (հենանիշները) չափելի են, որը հնարավորություն է տալիս կատարելու քանակական ու որակական ճշգրիտ գնահատումներ, սահմանելու, համեմատելու և գնահատելու ՄԿԾ-ների որակի ապահովման, մրցունակության ու համադրելիության ցուցանիշները, ինչպես նաև վերջիններիս բարելավման հնարավորությունները,

6) ***մրցունակություն.*** բենչմարքինգի իրականացման համար ընտրվում են այն բուհերը, որոնց ՄԿԾ-ների մշակման, իրականացման և շարունակական բարելավման փորձն առաջավոր է, և կարող է ուղղորդել բենչմարքինգի արդյունքները ելակետային դարձնելու՝ Մասնաճյուղի ՄԿԾ-ների բարելավման ու վերանայման կամ նոր ՄԿԾ-ների ներդրման գործընթացներում, ինչպես նաև տեղորոշելու և ամրապնդելու տվյալ ՄԿԾ մրցակցային դիրքն աշխատաշուկայում,

7) ***համագործակցություն.*** բենչմարքինգի իրականացման համար կարող է հաստատվել համագործակցություն համանման ՄԿԾ-ներ իրականացնող բուհերի և նույն կամ հարակից ոլորտներում գործունեություն իրականացնող կառույցների հետ:

5. ՄԿԾ-ՆԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5.1. ԵՊՀ ԻՄ-ում իրականացվում են բենչմարքինգի հետևյալ տեսակները՝

1) **ներքին բենչմարքինգ.** տվյալ ՄԿԾ-ի և ԵՊՀ և/կամ ԵՊՀ ԻՄ համանման կամ այլ ՄԿԾ-ների բենչմարքինգ, ծրագրերի համեմատություն, լավագույն փորձի բացահայտում և տարածում,

2) **արտաքին բենչմարքինգ**. տվյալ ՄԿԾ-ի և հայաստանյան և (կամ) օտարերկրյա այլ բուհի համանման ՄԿԾ-ների բենչմարքինգ, ինչն իրականացնելիս կիրառվում են հետևյալ ենթատեսակները՝

1. ***մրցակցության բենչմարքինգ***. հայաստանյան և (կամ) օտարերկրյա այլ բուհի բարձր մրցունակություն ունեցող ՄԿԾ-ների վրա ազդող առանցքային գործոնների, բենչմարքների (հենանիշների) և գործունեության արդյունավետության համապատասխան ցուցանիշների ուսումնասիրում՝ մրցակցային դաշտում տվյալ ՄԿԾ դիրքը տեղորոշելու, առաջավոր փորձը ԵՊՀ ԻՄ համատեքստում տեղայնացնելու և մրցակցային առավելության ձեռքբերման հնարավորությունները գնահատելու նպատակով,

2. ***ռազմավարությունների բենչմարքինգ.*** հայաստանյան և (կամ) օտարերկրյա այլ բուհի այն ռազմավարությունների ու մարտավարությունների ուսումնասիրում և համեմատական վերլուծության կատարում, որոնց իրականացմամբ ապահովվում են համանման ՄԿԾ-ների շարունակական բարելավումն ու այդ ոլորտի երկարաժամկետ զարգացումը,

3. ***գործընթացների բենչմարքինգ.*** հայաստանյան և (կամ) օտարերկրյա այլ բուհի կողմից իրականացվող այն կանոնակարգերի, ընթացակարգերի, գործառնությունների ու գործընթացների ուսումնասիրում և համեմատական վերլուծության կատարում, որոնց կիրառմամբ կամ իրականացմամբ տվյալ բուհն ապահովում է համանման ՄԿԾ-ների շարունակական բարելավումը:

5.1. Ներքին բենչմարքինգը անհրաժեշտ է որակի ներքին ապահովման համակարգի գործունեության ազդեցության մշտադիտարկման և բարելավման համար:

5.2. Արտաքին բենչմարքինգը իրականացնելիս կարևոր է որոշել, թե Մասնաճյուղը այլ համալսարանների հետ ինչ նմանություններ ունի, կատարել համեմատական վերլուծություն այլ բուհերի հետ և անհրաժեշտության դեպքում ներդնել այլ համալսարանների լավագույն փորձը՝ հաշվի առնելով Մասնաճյուղի գործունեության սահմանափակումները:

6. ՄԿԾ-ՆԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.1. ՄԿԾ-ների բենչմարքինգն իրականացնում են ԵՊՀ ԻՄ ՄԿԾ-ների համար պատասխանատու համապատասխան ամբիոնները կամ ստորաբաժանումը՝ հայաստանյան և (կամ) օտարերկրյա այլ բուհերի անհրաժեշտ տվյալների ու տեղեկությունների ձեռքբերման ու վերլուծության միջոցով:

6.2. Բենչմարքինգի իրականացման համար լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտության դեպքում ԵՊՀ ԻՄ-ը ՄԿԾ բենչմարքինգ իրականացնող ամբիոնին կամ ստորաբաժանմանը տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ, միջոցներ ու պայմաններ՝ վերջիններիս կողմից համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու պարագայում:

6.3. Համապատասխան ֆակուլտետի դեկանը ձևավորում է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվում են տվյալ ՄԿԾ ղեկավարը և բենչմարքինգի իրականացման գիտելիքներ և փորձառություն ունեցող պրոֆեսորադասախոսական և/կամ ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչներ, ծրագրի ուսանողներ և այլ շահակից խմբերի ներկայացուցիչներ:

6.4. ՄԿԾ-ների բենչմարքինգի գործընթացները, ներառյալ՝ տվյալների ու տեղեկության հավաքագրումը, մշակումը, վերլուծությունն ու արդյունքների ամփոփումն իրականացնում է աշխատանքային խումբը՝ ըստ սույն կարգի հիմնադրույթների՝ ներկայացված փուլերին ու ձևաչափերին համապատասխան (Հավելված 1):

6.5. Աշխատանքային խումբը կարող է օգտագործել այլ բուհի կողմից իրականացվող ՄԿԾ-ներին առնչվող տվյալներն ու տեղեկությունը (ներառյալ քանակական ու որակական ցուցանիշներ), եթե դրանք հանրահասանելի/հրապարակային են հավաստի աղբյուրներում:

6.6. ՄԿԾ-ների բենչմարքինգն իրականացվում է ըստ անհրաժեշտության: Տվյալ ուսումնական տարվա ավարտին ՄԿԾ-ների բենչմարքինգ իրականացրած ամբիոնի կամ ՄԿԾ ղեկավարը ԵՊՀ ԻՄ համապատասխան ֆակուլտետի խորհրդին, ՈՒՄՎ-ին, ՄԿՈԱ և ԿԲԴՎ բաժիններին

ներկայացնում է բենչմարքինգի արդյունքները և դրա հիման վրա մշակված ՄԿԾ բարելավման ծրագիրը:

6.7. Ինստիտուցիոնալ մակարդակում ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման մեթոդաբանության միասնականությունն ու արդյունքների համադրելիությունն ապահովելու նպատակով ՄԿՈԱ բաժինը կազմակերպում է բենչմարքինգի արդյունքների վերլուծության ներկայացում Որակի կառավարման մշտական հանձնաժողովին, անհրաժեշտության դեպքում՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին:

7. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

7.1. ԵՊՀ ԻՄ ՄԿԾ-ների բենչմարքինգն իրականացվում է հետևյալ հաջորդական փուլերով.

7.1.1. Բենչմարքինգի պլանավորում. ՄԿԾ իրականացման համար պատասխանատու ամբիոնը կամ ֆակուլտետը.

1) բենչմարքինգի իրականացման համար ընտրում է առաջատար կամ էտալոնային այնպիսի բուհ (բուհեր), որն ունի համադրելի առաքելություն, ռազմավարական նպատակներ և խնդիրներ, ունի տեղեկատվության փոխանակման ցանկություն, բենչմարքինգի թիրախային ոլորտում ցուցաբերում է լուրջ առաջխաղացում, միջազգային մակարդակում իրականացնում է կրթական գործընթացների բարելավմանը և առաջավոր փորձի ներդրմանը միտված որոշակի գործունեություն:

2) ձևավորում և հաստատում է բենչմարքինգի իրականացման աշխատանքային խումբ և կատարում գործառույթների բաշխում աշխատանքային խմբի անդամների միջև,

3) սահմանում է բենչմարքինգի նպատակները, խնդիրներն ու ժամկետները (ըստ Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի),

4) կատարում է ռեսուրսների պլանավորում՝ նախանշելով այն նյութական և (կամ) ոչ նյութական միջոցներն ու ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ բենչմարքինգի արդյունավետ իրականացման համար:

5) ընտրում է բենչմարքինգի անցկացման մեխանիզմներ ու գործիքներ (հարցաթերթեր, հարցազրույցներ, աշխատանքային այցեր և այլն):

7.1.2. Բենչմարքինգի իրականացում. ՄԿԾ բենչմարքինգ իրականացնող աշխատանքային խումբը՝

1) սահմանում է բենչմարքինգում կիրառելի ցուցանիշների խումբը, չափանիշներն ու բենչմարքները (հենանիշները), ընտրում է բենչմարքինգի տեսակը,

2) ուսումնասիրում է ընտրված ՄԿԾ-(ներ)ի նպատակները, խնդիրները, ուսումնառության վերջնարդյունքները և այլ բաղադրիչները, ՀՀ ՈԱԾ և (կամ) ՈՈԾ համապատասխան աստիճանը,

նրանցում կիրառվող ուսուցման ժամանակակից մեթոդներն ու կրթական տեխնոլոգիաները, ՄԿԾ-ների արդյունավետության չափման գործիքներն ու եղանակները և առանցքային այլ բաղադրիչներ,

3) հավաքագրում, ուսումնասիրում և վերլուծում է ընտրված ՄԿԾ-(ներ)ի (կամ դրա(նց) որոշակի բաղադրիչի) վերաբերյալ անհրաժեշտ տվյալներն ու տեղեկությունները (ըստ սույն փաստաթղթին կից Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի),

4) հավաքագրված տվյալների ու տեղեկությունների համեմատական վերլուծության արդյունքում դուրս է բերում ՄԿԾ-(ներ)ի բովանդակային և կառուցվածքային նմանություններն ու տարբերությունները, մրցունակությունը խթանող առանցքային գործոններն ու չափանիշները և անհրաժեշտ այլ բաղադրիչներ:

7.1.3. Բենչմարքինգի արդյունքների ամփոփում. Աշխատանքային խումբը՝

1) ամփոփում է ընտրված ՄԿԾ-(ներ)ի կամ դրանց համապատասխան բաղադրիչների հետ համեմատական վերլուծության արդյունքները և գնահատում բենչմարքինգ անցնող ԵՊՀ ԻՄ ՄԿԾ բարելավման գործընթացում դրանց տեղայնացման հնարավորությունները,

2) համադրված ու ամփոփված տվյալների ու տեղեկության հիման վրա կազմում է հաշվետվություն, որում արտացոլվում են ԵՊՀ ԻՄ ՄԿԾ բենչմարքինգի իրականացման արդյունքները և բարելավմանն ուղղված առաջարկությունները:

7.1.4. Բենչմարքինգի արդյունքների ներդրում. ԵՊՀ ԻՄ համապատասխան ամբիոնի վարիչը կամ ֆակուլտետի դեկանը և բենչմարքինգ իրականացնող աշխատանքային խումբը՝ բենչմարքինգի արդյունքների հիման վրա մշակում են գործողությունների պլան, որում նշվում են բենչմարքինգ անցած ՄԿԾ բարելավման և (կամ) նոր ՄԿԾ մշակման ու ներդրման ուղղությամբ իրականացվելիք գործողությունները և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները:

8. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

8.1. Սույն կարգը հաստատում է մասնաճյուղի Գիտական խորհուրդը:

8.2. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել.

1) Մասնաճյուղի տնօրենի,
2) գիտական խորհրդի անդամի,
3) որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԵՊՀ ԻՄ ՄԿԾ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

ՄԿԾ անվանումը	
1.ՄԿԾ բենչմարքինգ իրականացնող ԵՊՀ ԻՄ ստորաբաժանման անվանումը	
2. ՄԿԾ բենչմարքինգ իրականացնող աշխատանքային խմբի կազմը	
3. ՄԿԾ բենչմարքինգի իրականացման համար նախատեսված ժամկետը և ժամանակացույցը	
4. ՄԿԾ բենչմարքինգի իրականացման նպատակները և խնդիրները	
5. ՄԿԾ բենչմարքինգից ակնկալվող արդյունքները	
6. Բենչմարքինգի համար ընտրված ՄԿԾ համառոտ նկարագրությունը	

	Այլ բուհի ՄԿԾ	ԵՊՀ ԻՄ ՄԿԾ
ՄԿԾ անվանումը		
ՄԿԾ նպատակներն ու խնդիրները		
ՄԿԾ ուսումնառության վերջնարդյունքները (հղում ՀՀ ՈԱՇ/ՈՈՇ համապատասխան մակարդակին)		
Ուսումնական պլաններ (կրեդիտները, ժամաքանակը)		
ՄԿԾ-ին առնչվող այլ տվյալներ և տեղեկություն		

ԵՊՀ ԻՄ ԵՎ ԱՅԼ ԲՈՒՀԻ ՄԿԾ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԵՊՀ ԻՄ ՄԿԾ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԵՊՀ ԻՄ ՄԿԾ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	ԱՅԼ ԲՈՒՀԻ ՄԿԾ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ
1.		
2.		
3.		
4.		
5.		

ԵՊՀ ԻՄ ՄԿԾ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԻՄՆՎԱԾ ԱՅԼ ԲՈՒՀԻ ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ

1.
2.
3.
4.
5.